

Մ. ՔՈՒՄՈՒՆՅ

բ.գ.թ., դոցենտ (Գորիս)

E-mail: prof1972@mail.ru

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

(Վիճահարույց ստուգաբանություններ,
բնիկ և օտար բառային
ընդհանրություններ կամ
հանդիպադրումներ)

Սյունիք-Արցախ բարբառախմբում 90-ից ավելի բառեր կան, որ արտահայտում են տարածական հարաբերություններ, ծագմամբ ընդհանրություններ ունեն հնդեվրոպական լեզուների հետ: Այդ բառերից են՝ **կէտ (кет)**, **քաշ (каш)**, **զէի (зей)**, **դօլ (хол)**, **կոդ-մ (кох-м)**, **քիփ (кип)**, **ձօնդ (чонд)**, **ծիպ-լի (ципли)**, որոնք լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ բարբառախմբում ձևով և իմաստով փոփոխություններ են կրել: Այս բառերի շուրջ անցկացված բառաքննական փորձերը կարող են օգտակար լինել հայոց լեզվի պատմության, համեմատական լեզվաբանության և հայ բարբառագիտության բնագավառների համար:

Բանալի բառեր՝ Սյունիք-Արցախ, բարբառ, բառապաշար, հնդեվրոպական, ստուգաբանություն, փոխառություն, բառիմաստ, տարածական հարաբերություն:

М. КУМУНЦ

**О НЕКОТОРЫХ ДИАЛЕКТИЧЕСКИХ
АРХАИЗМАХ, ВЫРАЖАЮЩИХ
ПРОСТРАНСТВЕННЫЕ ОТНОШЕНИЯ
(Спорные этимологии, общность родных и
иностранных слов или встреча слов)**

Сюникско-арцахская диалектная группа насчитывает более 90 слов, которые выражают пространственные отношения и имеют сходство с индоевропейскими языками. Примеры этих слов: կէտ (кет), քաշ (каш), զէհ (зей), ղոլ (хол), կողմ (кох-м), քիփ (кип), ձօնդ (чонд), ծիպ-լի (ципли), которые под влиянием внешних и внутренних факторов развития языка претерпели изменения по форме и значению в диалектной группе. Эксперименты по изучению этих слов могут быть полезны в области истории армянского языка, сравнительного языкознания и армянской диалектологии.

Ключевые слова: Сюник-Арцах, диалект, лексика, индоевропейский язык, этимология, заимствования, значение слова, пространственные отношения.

M. KUMUNTS

**ABOUT A FEW DIALECTICAL ARCHAEOLOGIES
EXPRESSING EXPANDING RELATIONS
(Controversial etymologies, native and foreign word
similarities or encounters)**

There are more than 90 words in Syunik-Artsakh dialectal group, which express expanding relations and have similarities with Indo-European languages. For example կէտ (ket), քաշ (qash), զէհ (zeh), ղոլ (ghol), կողմ (kogh-m), քիփ (qiph), ձօնդ (tchond), ծիպ-լի (tsip-li), which have undergone changes under the influence of external and internal factors of language development in the dialectal group in their meaning and shape. The lexical experiments conducted around these words can be useful for the fields of the history of the Armenian language, for comparative linguistics and Armenian dialectology.

Key words: Syunik-Artsakh, dialect, vocabulary, Indo-European, etymology, borrowing, literal, spatial relationship.

Մյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում բավականին շատ են այն բառերը, որոնց զուգահեռները գտնում ենք ոչ միայն հայ մատենագրության մեջ, այլև հայերենի հետ հնագույն շրջանում հնարավոր ընդհանրություններ ունեցող լեզուներում: Ժամանակի ընթացքում լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների (ժողովուրդների տեղաշարժեր,

քոչվոր ցեղերի մուտքը պատմական Հայաստան և այլն) ազդեցությամբ շատ բառեր ձևով և իմաստով բազմապիսի փոփոխություններ են կրել: Այդուհանդերձ, պատմահամեմատական լեզվաբանության առաջադրած ուսումնասիրության մեթոդների շնորհիվ փորձեր են արվում վերականգնելու նախնական ձևերը, որոշելու ծագումնաբանական հարցեր, առանձնացնելու ազդեցությունները:

Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի՝ տարածական հարաբերություններ արտահայտող բառերը բավականին շատ են. դրանցից փորձել ենք քննել այնպիսիք, որոնք լեզվաբանության տարբեր տեսանկյուններից խնդրահարույց են:

Հ.-ե. ***geid-** «խողտացնել, խողտալ, խոցել, մեխել, կպցնել, հաստատել, անցնել, շարել, շփոթեցնել, շփոթել» արմատից հայերենում բավական անվանումներ են ձևավորվել: Արդյունքում հարստացել է համանունների շարքը: Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում պահպանվել են իմաստներ, որ չկան կամ նվազ տարածում ունեն հայերենի մյուս տարբերակներում¹: Այսպես՝ **կէտ** «կետ, նշանակետ» իմաստից բացի կան՝ 1. **կէտ** «շնաճանձ», 2. **կէտ** (-անել, կէտել) «1. երբ հորթերը միանգամից ծառս են լինում և փախչում, պոչները բարձրացրած այսուայնկողմ վազվզում», 2. **կէտ** «կետ, նշան», 3. Արց. **կէտ** «արգելք, դժվարություն», որոնք, կարծում ենք, բոլորն էլ ծագում են նախաձևից և պահպանվում են բարբառախմբում (հմմտ. վերոնշյալ իմաստները):

Եզր բառին հոմանիշ է բարբառախմբի **զէհ** «եզր, ծայր, հարթության հատման մասը, կողմը»: Նշվում է արևելյան լեզուներից փոխառությունների շարքում²: Պրսկ. **zeh** /зэ/ (Ատր. թյուրք. **zeh** «զգեստի ծայրերին կարված երիզ» և այլն) համանունների իմաստներն են՝ «աղեղնալար», «ծննդաբերություն», «կեցցե», «թառ», հնգ. «բարակ թել՝ ոչխարի աղիքից, մետաքսից կամ մետաղից»: ***Eg hero-** (լատ. **Acheron**, Հոմ. հուն. **Ἀχέρων**) հիմքի ժառանգորդներից իրանականը բացակայում է³, իսկ հայերենի բարբառներում եզր **բառը** հնչյունափոխական զանազան տարբերակներով է վկայվում, ինչպես՝ Հձ. **իզել**, Սվ. **իզզիք**, Մրդ. Սլմ. **յէրզ**, Երև. **յէրզը**⁴ և այլն: Չենք կարող ասել՝ բարբառախմբի **զէհ**-ը այդ տարբերակներից մեկն է (գրք. հոլովված ձևի՝ **ց՝ յէզէր (եզէր) > զէր > զէհ (ը > օ > հ)**, և պատահական են ձևային և նրբիմաստային ընդհանրությունները արևելյան

¹ **Ջահուկյան Գ. Բ.**, Հայ բարբառագիտության ներածություն (վիճակագրական բարբառագիտություն), Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 286:

² **Մարգարյան Ա. Յ.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, Արցախի պետական համալսարան, 2013, էջ 136 (այսուհետև՝ ՂԲԲ):

³ **Pokorny J.**, Indogermanisches etymologisches Wörterbuch, vol. 1, Bern, Munich: "A. Francke", 1959, p. 291-292 (այսուհետև՝ Pokorny):

⁴ Բոլոր տարբերակները տե՛ս՝ **Աճառեան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1926, էջ 6-7 (այսուհետև՝ ՀԱԲ):

լեզուներում առկա բառի հետ, թե՞ հնարավոր է՝ բարբառախմբից անցած և արևելյան լեզուներում առկայացած բառ է: **Zeh/օ** / արմատով ջրի հետ կապված հատուկ և հասարակ անուններ կան արաբ. և պարսկ.¹, իսկ թուրքերենի բարբառներում բառն ունի նույն «եզր» իմաստը՝ **ze'h** || **zeh** «անկյուն, ավամերձ կտրուկ գիծ»: Հենց այս հարցերի առկայությամբ բարբառախմբի **զեհ**-ը դեռևս չի կարող համարվել **եզր** բառի բարբառային տարբերակը, բայց և առկա է մնում նրա ծագումը, նոստրատիկ հնարավոր հիմքեր ունենալու հարցերը:

Հակված ենք ընդունելու, որ **կողմ** բառի բարբառախմբի տարբերակը **դոլ**-ն է՝ առանց **մ** (մն) մասնիկի՝ **կոլ**²: **Կ** > **դ**-ի համար հմմտ. **կոճ** || **դոճ** և այլն: «Պատահական նմանություն ունի թուրք. **qol** /قوله/ «թև, կողմ»³: Հավանական է՝ **դ** և **լ** փոփոխությունից հետո է կատարվել բառասկզբի հնչյունափոխությունը, և արդյունքում նմանվել են բնիկ և օտար ձևերը, որի հետևանքով էլ **կող**-**մ**(ն) արմատը պահպանվել է **կոխք**, **կոխքավ**, **կոխկինա** և այլ բաղադրություններով, իսկ **դոլ**-ը՝ «կողմ» իմաստով՝ **դոլավ**, **դոլան**, **դոլանի** և այլն: **Կողքը հաստ** || **դոլը հաստ** «համառ» իմաստը, կարծում ենք, մեր ենթադրության օգտին է վկայում:

Հայերենում **քաշ** նշանակում է՝ 1. «մեջք», 2. «քարշ», 3. «մի տեսակ քար», 4. **քաշ-իկ** «պարան», այլն՝ **քաշկ**, **քաշկեն**, **քաշկու**, **քաշ(ի)մ** և այլն⁴: Այս ամենի դիմաց *Մյունիք-Արցախ* բարբառային բառապաշարում կան համանուններ՝ **քաշ** «կշիռ, կշեռք», **քաշ** «1. ցած, 2. փոխ. վատ», **քաշ** «արծվի տեսակ՝ մուգ գույնի» (**թռչնաքաշտ**)⁵, **քաշ** **քարշ** արմատից՝ **քաշ տալ** «քաշել», ինչպես և **քաշկ(ը)** «քաջք՝ առասպելական ոգի», **քաշ կյալ** «քարշ գալ», **քաշկատ** || **կաշկատ** «քարակոյտ», **քաշվել** «1. հեռանալ, 2. մեկուսանալ», **քաշվել** «ամաչել» և այլն: Ինչպես նկատում ենք, բավական հասկացություններ կան **քաշ** ձևից, որոնք, սակայն, զանազան երևույթներ և գործողություններ են արտահայտում: Սրանցից փորձենք քննել **քաշ** «ցածր, ներքև» իմաստով բառը, որ Հ. Աճառյանը նշում է Ազլ. (քօշ) Գնձ. Ղգ. Ջղ. «ցած, ոչ բարձր» և միայն Արց.՝ «վար» իմաստներով⁶: Բարբառախումբը այս արմատից ունի՝ **քաշ օնել**, **քաշ քիցել** «իջեցնել», **քաշ քիցել** «քաշ գցել, ներքև գցել, կախել», **քաշիկ** «ցածրիկ», **քըշանալ** «1. նվազել, 2. ներքև իջնել, 3. կռանալ, 4. ընկնել, պակասել, 5. նվաստանալ» և

¹ <https://www.vajehyab.com/?q=%D8%B2%D9%87&d=en>:

² **Հովհաննիսյան Լ.**, Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառերի ստուգաբանություն, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1, Երևան, 2019, էջ 179:

³ ՀԱԲ II, էջ 622:

⁴ Այս բոլորը տե՛ս՝ ՀԱԲ, էջ 776:

⁵ «Իսկ թռչնաքաշտ որ մեծամեծ են եւ սևաթոյր, սլացաւ ի վերուստ ի վայր, եւ եկն ի սեղան թագաւորին...» (**Օրբէկեան Ստեփաննոս**, Պատմութիւն նահանգին Միսական, հատ. Ա., Բ գործատուն Կ. Վ. Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 93 (այսուհետև՝ Օրբէկյան 1859):

⁶ **Աճառեան Հր.**, Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Թիֆլիս, 1913, էջ 1093:

այլն, որ, կարծում ենք, բարբառախմբում բացակայող **ներքն** հասկացությանն է փոխարինում:

Սյունիք-Արցախ պատմական վայրում **քաշ** արմատով կան բազմաթիվ տեղանուններ՝ **Քաշաթաղ** (**Քշթաղ**, **Քաշաթաղք**, **Քաշտաղ** և այլն), **Քաշունիք**¹, **Քաշին քար**, **Քաշիմարգ** և այլն²: Նշենք, որ **Քաշաթաղը** և այլ տեղանուններ առնչակցվում են ցեղանվան հետ՝ «Քաջբերունի, որը հավանորեն ստացվել է Քաջբերունի ձևից, նշանակելով **kaš** (=kaška կամ gašga) ցեղից»³, որ քիչ հավանական է թվում: «Ներքն» իմաստով բարբառախմբին փոխատու հիմնական լեզուներում **քաշ** արմատով բառ չի հանդիպում. թյուրք. ունի **kaş** «հոնք»⁴, համանուն՝ «ծայր»՝ պրսկ. փոխառյալ⁵: Մատենագրական վկայություններ նշված իմաստներով նույնպես չեն հանդիպում, ուստի կարծում ենք՝ ձևով և իմաստով առավելապես մոտ է հ.-ե. ***kau-** «տապալել, իջեցնել, վար առնել, վիատեցնել», ածանցված ձևը՝ ***kau-no-s** (> ***kau-s(k)-**) «վայր իջեցնել, նվաստացնել, խոնարհ», հմմտ.՝ հուն. **κυνός, κακός** «ղժգոյն, վատ, խոժոռ» < **καίω** «այրել»⁷, գոթ. **hauns** «ցածր, խոնարհ», լիթ. **kūniūš, kūvėtis** «ամաչել»⁸, որոնց համեմատությամբ բարբառախոսմբն ունի՝ **կրլոխը քաշ** «ամոթահար», **կրլոխը քաշ անել**, **կրլոխը քաշ քիցել** «ամաչել, ամոթահար լինել» (իմաստային առնչակցությունը ***xeis-** «ծռել, կորացնել» հիմքի հետ քիչ հավանական է) : Տեղանուններից համեմատելի է **Քաշաթաղ**-ը (իբրև 1300 թվականից⁹ կոչվում է **Խոժոռաբերդ**). «Աղահեջ՝ գաւառ, որ այժմ կոչի **Քաշաթաղ** և **Խոժոռաբերդ** (ընդգծումը՝ Մ.Ք.)»¹⁰: **Քաշ** արմատի տեղանվան մեջ բնիմաստի պահպանման օգտին է խոսում նաև մի հանգամանք. պատմական Սյունիքի **Քաշաթաղ** և **Խոժոռաբերդ**-ը իմաստային պատճենմամբ թյուրք. ցեղերի կողմից անվանվել է **Լաչին**, որ նշանակում է **քաշ** թռչուն, հմմտ.՝ **laçın**¹¹ || **laçin** «1.բազե կամ բազեի

¹ Այս մասին տե՛ս՝ **Ղարազորյան Ա.**, Սյունիքի Բաղը և Քաշունիք գավառների մի շարք բնակավայրերի տեղադրության շուրջ, *Լրաբեր հասարակական գիտությունների*, № 1, 2002, էջ 109-117:

² **Հակոբյան Թ.Խ.**, **Մելիք-Բախշյան Ստ.Տ.**, **Բարսեղյան Հ.Խ.**, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հատ. V, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1998, էջ 298-299:

³ **Ղափանցյան Գ. Ա.**, *Հայոց լեզվի պատմություն (հին շրջան)*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1961, էջ 51:

⁴ <https://www.nisanyansozluk.com>.

⁵ *Azərbaycanca dilinin izahlı lügət*, cild 1, «Şərq-qərb», Baki, 2006, s. 648.

⁶ *Հունարենի իմաստները քաղեցինք այս գրքից՝ Phavorinus G., Dictionarium magnum*, 1712, p. 416.

⁷ *Բնաստները տե՛ս՝ Դворецкий И.Х., Древнегреческо-русский словарь, том 1, Государственное издательство иностранных и национальных словарей, Москва, 1958 с. 858.*

⁸ Pokorny, p. 535.

⁹ **Հիւրշման Հ.**, *Հին հայոց տեղոյ անունները (Հայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին ուսումնասիրութիւններով)*, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1907, էջ 226:

¹⁰ Օրբելյան Ա 1859, էջ 51:

¹¹ *Derleme sözlüğü, Türkiye'de Halk Ağzından, IX, 2-ci baskı, Ankara üniversitesi, Ankara, 1993, s. 3057-3058.*

պես մի թռչուն, 2. կտրուկ, 3. կոպիտ»¹: Ձևիմաստային առումով այս խմբին է աղերսվում նաև **քաշ** «նիհար, տգեղ, չեչոտ» բառը, որ առանձնապես նույնացվում է թռչնի հետ. արդ՝ հնարավոր է՝ ***kau-** բնիմաստից է ստացել թռչնանունը, որ նշվում է անհայտ ծագմամբ բառերի շարքում²: Հավանական է, որ բարբառախմբի **քըշըսողան, քըշըսըխտոր** (համապատասխանաբար հարադրությամբ՝ **քաշու/ի սողան**) բարդությունները **քաշ** բաղադրիչի «ներքև, ցած» իմաստներով են բաղադրված:

Կիպ և բարբառախմբի **քիփ** «կպած, հարած» բառերը բացակայում են Գ. Ջահուկյանի³ և Կ. Բաքի⁴ ներկայացրած հնդեվրոպական ծագման բառիմաստային խմբում: Հետագա ուսումնասիրություններում, սակայն, աղերսվում է հ.-ե. նախաձևի հետ. «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ ***gʷēb-** «լորձնոտ, կպչուն, մածուցիկ» արմատից. հմմտ. իսլանդերեն *kvar(i)* «դոնդոդ, դոնդոդանման նյութ»⁵: Բարբառախմբում առկա է նաև **քիփիկ/զ**, որ սխալմամբ բխեցվում է⁶ թյուրք. **kip** «ձուլվել» արմատից: Կարծում ենք՝ հայերենի **կիպ-քիփ** և թյուրք. **kip** հանդիպադրումից իմաստային նրբերանգներ են առաջ եկել: Նիշանյանի բառարանում նշվում է մի հնացած ձև՝ արտասանական **gib** կամ **gip** նախաձևից⁷: Իսկ ինչ վերաբերում է ***kēp** (տունգ. ***keb-te** «գոտի, որովայն, փորը մեծացնել», մոնղ. ***keberdeg** «մարմին»)՝ թյուրք. ***gebde** «մարմնի վերին հատվածը», այլև ***kēp** թյուրք. ***gēp** «ձև, օրինակ, պատկեր»⁸ հիմքային ձևերին և իմաստներին, ապա նկատելի է, որ թյուրք. խմբում չեն արտացոլում այն նույն ձևն ու իմաստը, ինչպես հայերենում **կիպ-քիփ** տարբերակները: Կարելի է կարծել, որ թյուրք. **kip**-ի համանուններից «կից, կողմը, կողմնակից» իմաստով բառը հայերենից է անցել թյուրքերենին:

Կըլդ || կել || կյել «1. բթամատից մինչև ճկույթ ընկած հատվածը, դրա չափը, բացվածքը, 2. մի թզի չափով, 3. փոխ. փոքր», այստեղից՝ **կյել անել** «թիզով

¹ Tarama sözlüğü, Türk dil kurumu yayınları; 2-ci baskı, Ankara üniversitesi basımevi, Ankara, 1996, Kad. XIV. 169. s. 2785.

² Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ», Ե., 2010, էջ 776-777 (այսուհետև՝ ՀՄԲ):

³ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Հայկական ՄՄՀ ԳՄ հրատ., Երևան, 1987, էջ 215-216:

⁴ Buck C. D., A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages (A contribution to the history of ideas), University of Chicago press, Chicago & London, 1988, p. 829.

⁵ ՀՄԲ, էջ 406:

⁶ ՂԲԲ, էջ 813:

⁷ <https://www.nisanyansozluk.com/?k=kip>:

⁸ Starostin S. A., Dybo A. V., Mudrak O. A., An etymological dictionary of Altaic Languages, vol. 3, Brill, Leiden, Boston, 2003, p. 667-668.

չափել», կյրեղ չափել «թիզով գուշակություն անել»¹ բառը, ենթադրվում է, ծագում է հ.-ե. **skel-* արմատի «կրճատել, կտրել» իմաստներից²:

Ծիպ-լի || ցիպ-լի «1. փոքր, բարակ, 2. ճկույթ, 3. ճյուղ, բարակ ճյուղ, ճիպոտ, դալար գավազան» բառի բաղադրություններից են՝ **ծիպլի-ծապլի** «բարալիկ», **ծիպլիպուլի** (անել) «նվազ կարողությամբ (աշխատել)», **Ծիպլի Մատուր** (հատկանունից) «շատ նիհար ու վտիտ մարդ»³: Հայերենի բարբառներում բառս առանձնապես տարածված չէ: Հ.-ե. աղերսներ են նկատվում բարբառախմբի **ցիպ-լի || ծիպ-լի** < **k'iph-*՝ **sk'iph*⁴ (հմմտ. *ցեռ - ծըլքսո* < *sk'er(d)-*)⁵՝ «բարակ ճկուն ճյուղ կամ արմատային մաս», հմմտ.՝ սնսկ. *šipha* (शिफा) «բարակ ձող, արմտիք», հուն. *κίφος* «կուզ, ճկվող», լիթ. *šipulys* «ծեղ, փայտի բարակ տաշեղ»: Եթե ընդունում ենք, որ **ցիպ-լի || ծիպ-լի** արմատից են նաև բարբառախմբի՝ իմաստով և ձևով մոտ **ծափան** «1. նիհար ու նվազ, փոքր, բարակ, 2. Գոր. փոքր բազե», **ծափլի** «1. ձագար, նուրբ ու բարակ» բառերը, ապա պահանջվում է պարզաբանում ձայնավորական փոփոխությունների շուրջ: Ենթադրվում է, որ **ծափ-լի**, **ծափ-**ան բառերում **ափ**-ի առկայությունը պայմանավորված է ոչ թե իրանական ազդեցությամբ⁶, այլ հ.-ե. **i-*ի՝ շեշտի ազդեցությամբ ձևավորված փոփոխությամբ՝ **ի > ըէ > ափ**: Բարբառային բառերի ոչ ձայնեղից հետո քմային **ափ**-ն ձևավորվել է **ի > ըէ (ծիծաղ > ծըլծաղ, ծիծ > ծըլծ, ծիր > ծըլը)** օրենքը դադարելուց հետո, և, փաստորեն, սակավաթիվ բառեր շարունակել են կրել ձայնավորական փոփոխությունները առավել բաց արտասանության և պարզեցման միտումով: Այդ են վկայում **ծիպլիպուլի (ծըլպլէպուլի) > ծափլիպուլի, ծիպան (ծըլպան) > ծափան, ծէխ (հ.-ե. **g'huel-?* > ծըլէխ) > ծափ** տարբերակները, իսկ որոշներում արտասանական պարզեցումը առավել նկատելի է **պիծ (պըլծ) > պաձ > պած**:

Հնարավոր է, որ արմատից բարբառային կազմություններ լինեն՝ **ծիկոի-միկոի** «փոքր, բարակ», **մին պիծի** (որափոխությամբ), այլն՝ **պիծի (պուճո՞ւր)**, «մի քիչ, մի փոքր»:

¹ ՂԲԲ, էջ 376:

² Pokorny, p. 545-547.

³ Քաշայթաղի հայտնի Ծիծենավանքին վերաբերող ավանդազրույցներում առհասարակ սրբավայրի անվան առաջացումը կապվում է «բարակ, ճկույթ» և նման իմաստով հասկացությունների հետ (այս մասին տե՛ս՝ **Լալայան Վ.**, Հայոց դիցաբանության և քրիստոնեության համեմատություն, «Հայրենիք», Երևան, 2009, էջ 46-47):

⁴ Հ.-ե. **ph-* (փ) բարբառախմբում:

⁵ Եթե **ծիծենակ // ցիցենակ, ծիլանգ // ցիլանգ** և այլ տարբերակներում **ծ** և **ց** հնչյունների փոփոխությունը համարվում է բարբառային իրողություն, ապա, կարծում ենք, նույն տրամաբանությամբ չեն ձևավորվել **ծնել-ցինգնել, ծըլծ-ցիտթ** բառերը (առանձին ծագմամբ են զրկվում կամ, որ ավելի հավանական է, փոփոխությունը նախահայերենում է կատարվել և որպես համանուններ անցել հայերենին):

⁶ Այս ազդեցությունների մասին կարելի է տեսնել՝ **Աղաբեկյան Մ.**, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), պրակ 3, Երևան, 2010, էջ 105:

Ճօնդ «ծայր, եզր» բառի ստուգաբանական փորձ մեզ չի հանդիպել: Հայերենին հայտնի է **ճոնդ** «1. ճոթ, 2. կարկատանի կտոր» (նշվում է որպես փոխառյալ)¹: Չենք կարող վստահ լինել **ճօնդ** և հ.-ե. ***g'enu-** «ծնոտ» երկրորդական հիմքի ***g'onsdh-** հնարավոր առնչակցության հարցում: Ժառանգորդ լեզուներից զուգահեռում ենք լիթ. **žándas** «ծնոտ, ստորոտ», և լատիշ. **zuōds** «ծնոտ, սուր եզր» բառերը: Հենց վերջին իմաստն է արտահայտված բարբառախմբի **ճօնդ-պուճախ** (**ճընդըպուճախ**) բարդության մեջ՝ «եզր-անկյուն, անկյուն». հմմտ.՝ **ճօնդ-պուճախ չօնի/է** «շատ է, մեծ է» (ասվում է տարածքի, ունեցվածքի մեծ-շատ լինելու վերաբերյալ): Մենք չկարողացանք թյուրք. պրսկ. վրաց. **ճոնդ** բառի համապատասխան զուգահեռները ընտրել: Այդպիսի տվյալներ կամ բացակայում են, կամ ձևիմաստային առումով չեն համապատասխանում քննվող բառին: Կարծում ենք, որ հայերենին հայտնի **ճոն** «վրան, տակը», **ճոն** «խաղախորդ, մորթագործ, կաշեգործ»², **ճոն** «հաճար»³, **ճոն** «դերձակ» (վրաց. փոխառություն) բառերը նույնպես հնարավոր ընդհանրությունները չեն արտահայտում **ճօնդ** բառի հետ: Մի դիտողություն. **կըռճօնք**, **կըռօճ** բառերի վերջադիր **-ճօնք**, **-օճ** հնչյունախմբերով ձևերը այլ քննություն են ենթադրում:

Այսպիսով՝ նկատում ենք, որ բազմաթիվ վիճահարույց հարցեր են առաջանում **կէտ** համանունների, **զէհ-եզր**, **կողմ** – **դօլ**, **կիպ-քիփ**, **քաշ**, **ճօնդ-ճոն** բառազույգերի, **ծիպ-լի** բառերի ծագումնաբանական հարցերը քննելիս: Այդուհանդերձ, չենք կարող անտեսել դրանց՝ հնդեվրոպական լեզուների հետ ունեցած աղերսները: Բարբառախումբը տարածական տարբեր հարաբերություններ արտահայտող 90-ից ավելի բառեր է վկայում, որոնք ծագումնաբանորեն հնդեվրոպական տեղորոշում ունեն: Մի փոքր մասն է ներկայացվածը, որի շուրջ անցկացված բառաքննական փորձերը կարող են օգտակար լինել հայոց լեզվի պատմության, համեմատական լեզվաբանության և հայ բարբառագիտության բնագավառների համար:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը:

¹ **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, Հայկական ՍՍՌ Պետ. հրատ., Երևան, 1944, էջ 223:

² **Գայանեան Յ. Թ.**, Բառարան գանձարան հայերեն լեզուի, տպ. Գալֆա, Գահիրե, 1938, էջ 315:

³ ՀԱԲ III, էջ 211: